ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Մ. Սարյանի տուն-թանգարանի տնօրեն՝ Բելլա Իսահակյան

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վենետիկ, ապրիլի 16-ից 18-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝

Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան՝ պարոն Գագիկ Սուքիասյան և Վենետիկում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս՝ Գագիկ Սարուխանյան

4. Գործուղման նպատակը՝

ներկա գտնվել Վենետիկում Ավետիք Իսահակյանի 150-ամյակին նվիրված հուշատախտակի բացմանը: Ինչպես նաև գործնական հանդիպում ունենալու համար Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության վարդապետ՝ Հայր Համազասպ Քեշիշյանի հետ և քննարկել «Մարտիրոս Սարյանի գրքարվեստը» ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը:

5. Քննարկված թեման՝

«Մարտիրոս Սարյանի գրքարվեստը» ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը և ժամկետները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

6.1. Ելույթ եմ ունեցել Վենետիկում Ավետիք Իսահակյանի 150-ամյակին նվիրված հուշատախտակի բացմանը:

6.2. Հայր Համազասպի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին «Մարտիրոս Սարյանի գրքարվեստը» ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը, ցուցասրահը և ժամկետները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ցուցահանդեսը կազմակերպել 2027 թվականի գարուն-ամառ ամիսներին: Ձեռք է բերվել նաև Վենետիկում ՀՀ պատվավոր հյուպատոս՝ Գագիկ Սարուխանյանի աջակցությունը ցուցահանդեսի կազմակերպմանն օժանդակելու հարցերում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայր Համազասպի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն էլեկրոնային նամակագրության միջոցով քննարկել և հստակեցնել ցուցահանդեսի կազմակերպման հետ կապված բոլոր հարցերը՝ վերջնական լուծումներ տալու նպատակով: Ժամկետները՝ 2027 թվականի գարուն-ամառ ամիսներին: Ցուցահանդեսի կազմակերպման պատասխանատուներն են՝ Հայր Համազասպ Քեշիշյանը և Բելլա Իսահակյանը: Արդյունքը կլինի Սուրբ Ղազար Մխիթարյան Միաբանությունում «Մարտիրոս Սարյանի գրքարվեստը» ցուցահանդեսի կազմակերպումը և Մ. Սարյանի արվեստի այդ ճյուղի հանրահռչակումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Բելլա Իսահակյան

23.04.2026 թ.